*տացայ և սովաւ պարտաւոր արարի զիս, զի 'ի վեր ասացեալ վեց հարիւր դահեկանն պակասեցուցանեմ 'ի պարտուց Տեառն Մանասէի, որ պարտէ զիս միով վաշխապարտիւ. Թուաւ յունիսի 5. յամի Տեառն 1768. քանակութեամբ երեք հազար չորս հարիւր դահեկան երծաթ, հաստատութիւն բանիս ձեռնադրեցի առ յայսմ աւուր 'ի քաղաքի անի յամսեանն յունիսի 10. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1769։*

*Մանասէ որդոյ Պարուրայ.*

✡ 600 դրամ երծաթ.

Օրինակ թղթոյ արձակման 'ի Տարապարտուց։

## ԳԼՈՒԽ ՁԷ.

*Յայտնի լինի ամենեցուն, որ մեք ներքոյ ձեռնադրողք աթանաս որդոյ կիրակոսի գեղջէն մեղրու, կիրակոս որդոյ մլքսեդի գեղջէն յեղվարդու երկայն ժամանակաւ ընդ միմեանց առ և տուր արարաք, եթէ վաճառականութեամբ, եթէ պարտայտութեամբ և եթէ երկիր վարձու և դաշտ ճարակելոյ խաշանց և այլն, և 'ի սկիզբ մերոյ առ և տրից ընդ միմեանց մինչև ցայսօր 'ի միջի մեր ձեռնադրեցաք բազում կերպիւ գրեանք*